600.0414.21.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2016 թվականի №414Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐԻՆ ՈՒ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի №102Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը, և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

ա) 2016 թվականի ապրիլի 29-ի №98Ա որոշմամբ հաստատված սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկան, որի դրույթները սահմանված են 2016 թվականից սկսած, հինգ տարվա ժամանակահատվածի համար,

բ) 2016 թվականի մայիսի 4-ի №102Ա որոշմամբ համաձայնեցված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրի իրականացման փաստացի ծավալների փոփոխությունը՝

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության՝

   1) 2016 թվականի ներդրումային ծրագրի ճշգրտումներին.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016-2020 թվականների ներդրումային ծրագրին՝ համաձայն №№1-6 հավելվածների՝ №№1-3 հավելվածներում նախատեսված ուղղություններով ներդրումների իրականացումը համարելով առաջնահերթ:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016-2020 թվականների ներդրումային ծրագիրը կազմում է 97 388,4 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, որից 16 084,8 մլն դրամը՝ 2016 թվականին՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

ա. հոսանքազրկումների միջին տևողության և հաճախականության ցուցանիշների պահպանում, անվտանգության ապահովում և մաշված սարքավորումների փոխարինում. 2016-2020 թվականների ընթացքում՝ 31 946,8 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 3 342,4 մլն դրամ.

բ. թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության կրճատում. 2016-2020 թվականների ընթացքում՝ 2 170,4 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 340,4 մլն դրամ.

գ. նոր սպառողների միացում և բաշխիչ ցանցի զարգացման նպատակային ծրագրերի իրականացում. 2016-2020 թվականների ընթացքում՝ 21 515,0 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 4 714,0 մլն դրամ.

դ. առևտրային հաշվառման համակարգի բարելավում. 2016-2020 թվականների ընթացքում՝ 36 299,0 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 4 656,0 մլն դրամ.

ե. մեքենա-մեխանիզմների ձեռքբերում և վերազինում. 2016-2020 թվականների ընթացքում՝ 1 993,2 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 1 914,0 մլն դրամ.

զ. բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ. 2016-2020 թվականների ընթացքում՝ 3 464,0 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 1 118,0 մլն դրամ:

2) սույն որոշման №6 հավելվածով նախատեսված՝ հիմնավորված, ներդրումները սակագնային մարժայի շահույթի և մաշվածության հաշվարկման բազաներում կներառվեն №1 հավելվածի 5-րդ, 6-րդ և №2 հավելվածի 1-ին կետերով

նախատեսված աշխատանքների ամբողջական իրականացումից և շահագործման հանձնումից հետո.

2) մինչև 2017 թվականի հոկտեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2017-2020 թվականների ճշգրտված ներդրումային ծրագիրը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №102Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
21 դեկտեմբերի 2016 թ.
ժամը 16[00]